ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԸՆՏՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 04.04.2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի աշխատակարգի 23-րդ կետով՝ հանձնաժողովը ՈՐՈՇՈՒՄ է.

1. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում ընտրելու համար Ազգային ժողովին թեկնածու առաջարկելու մասին հարցը Հանձնաժողովի 04.04.2023թ. արտահերթ նիստում քննարկել հետևյալ ընթացակարգով՝

1) մինչև տասնհինգ րոպե տևողությամբ ելույթով հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում թեկնածուին ներկայացնելու իրավասություն ունեցող անձը.
2) հարցեր թեկնածուին ներկայացնող անձին.
3) մինչև երեսուն րոպե տևողությամբ ելույթով հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնում թեկնածուն.
4) հարցեր թեկնածուին.
5) թեկնածուին ներկայացնող անձին և թեկնածուին հարցեր տալու, հարցերին պատասխանելու, ինչպես նաև հարցերին արձագանքելու համար հատկացվում է մինչև երեքական րոպե.
6) մտքերի փոխանակություն, որի ժամանակ ելույթների համար հատկացվում է մինչև հինգական րոպե.
7) մինչև տասը րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով հանդես է գալիս թեկնածուն.
8) բաց քվեարկություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍՅԱՆ

04 ապրիլի 2023 թվական